

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը տեղեկատվություն է ներկայացնում 2012 թվականի հունվար-սեպտեմբերի (այդ թվում՝ սեպտեմբերի) երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2012թ. սեպտեմբերի ամսական և 2012թ. հունվար-սեպտեմբերի տարեկան արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները


	Չափի միավոր	2012թ. սեպտեմբեր	2012թ. սեպտեմբերը 2011թ. սեպտեմբերի նկատմամբ, %	Սեպտեմբերը օգոստոսի նկատմամբ, %	2012թ. հունվար-սեպտեմբեր	2012թ. հունվար-սեպտեմբերը 2011թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, %
Տնտեսական ակտիվության ցուցանիշը	%	x	104.4	114.0	x	107.6
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	մլն.դրամ	94 322.0	100.3	99.8	796 430.4	111.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը	մլն.դրամ	178 093.5	109.8	126.4	609 261.2	110.5
Շինարարության ծավալը	մլն.դրամ	56 776.8	105.0	143.4	263 238.9	98.0
Առևտրի շրջանառությունը	մլն.դրամ	202 036.6	103.9	107.0	1 440 860.0	102.9
Ծառայությունների ծավալը (առանց առևտրի)	մլն.դրամ	85 673.3	109.0	100.8	703 341.9	111.2
Մպառողական գների ինդեքսը	%	x	102.5	100.8	x	102.3
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	մլն.կՎտ.ժ	573.9	118.0	87.1	5 949.1	108.0
Միջին ամսական անվանական աշխատավարձը	դրամ	120 116	105.3	100.4	118 225	105.3
Արտաքին առևտրաշրջանառությունը	մլն.դոլար	433.3	82.1	92.2	4 041.6	102.4
	մլրդ.դրամ	177.2	x	x	1 617.7	x
<i>այդ թվում՝</i>						
արտահանում	մլն.դոլար	110.5	75.7	92.6	1 032.0	106.0
	մլրդ.դրամ	45.2	x	x	413.2	x
ներմուծում	մլն.դոլար	322.8	84.6	92.1	3 009.6	101.2
	մլրդ.դրամ	132.0	x	x	1 204.5	x

Ծանուցում. 2011 թվականից սկսած հրապարակվում է ամսական «Տնտեսական ակտիվության ցուցանիշը»: Ի տարբերություն «Համախառն ներքին արդյունքի ցուցանիշի», «Տնտեսական ակտիվության ցուցանիշը» հաշվարկվում է ըստ տնտեսական գործունեության տեսակների թողարկման ծավալների, ոչ թե ավելացված արժեքների ծավալների հիման վրա և չի ներառում արտադրանքի գուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները:

Պարզաբանումները ներկայացված են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվարին» տեղեկատվական ամսական զեկույցի էջ 8-ում:

Ստորև բերվում են գծանկարներ (ռադարներ), որոնք նկարագրում են ապրանքների և ծառայությունների արտադրության հիմնական ցուցանիշների փոփոխությունները.

Ապրանքների և ծառայությունների արտադրության հիմնական ցուցանիշների փոփոխությունները 2012 և 2011թթ. սեպտեմբեր ամիսներին



Ապրանքների և ծառայությունների արտադրության փոփոխությունները 2012 և 2011 թթ. հունվար-սեպտեմբերին

(նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %)

